ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/564-22 առ "16" 03 2022թ.

Ձեր № _____ առ "___" _____ 2022թ.

{№01/126 առ 21.05.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ}

«Ազուռ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Ա.Երիջանյանին
E-mail: azurllc@mail.ru

Հարգելի պարոն Երիջանյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար «խմելու ջուր» ապրանքի ձեռք բերման նպատակով «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մայիսի 21-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-73/21-01/126 պայմանագիրը, որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել 350 լիտր խմելու ջուր՝ 116550 (հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում պայմանագրով նախատեսված ապրանքը մատակարարվել է մասնակի՝ 162 լիտր, 188 լիտրը հրաժարվում եք մատակարարել:

Համաձայն պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»,

Ելնելով վերոգրյալից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մայիսի 21-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-73/21-01/126 պայմանագիրը և տեղեկացնում է, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60